

**Յ. Պողոս Գոճանեան**

**ՈՒՂԵՑՈՅՑ**

**ԴԱՍԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ**

**ՄԵԻԹԱՐԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ**

**Վիեննա-Երեւան 2006**



FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

**Հ. Պողոս Գոճանեան, «Ուղեցոյց դասական ուղղագրութեան»,  
Վիեննա-Երևան, Մխիթարեան հրատարակութիւն, 48 էջ:**

«Ուղեցոյց դասական ուղղագրութեան» ձեռնարկում հեղինակը ջանացել է ստեղծել դասական ուղղագրութեան գործնական, յստակ, վստահելի և ամբողջական պատկերը: Ձեռնարկի նպատակն է, մասնաւորաբար Հայաստանում լայն շրջանակներին ծանօթացնել այդ ուղղագրութեանը:

Միաժամանակ արուել են սկզբունքային սրբագրութիւններ առ այսօր ընդունուած դասական ուղղագրութեան մէջ, որ կը հետաքրքրէ նաեւ սփիւռքահայութեանը:

Սոյն աշխատութիւնը դիտուում է որպէս նպաստ արեւելահայերէնի և արեւմտահայերէնի համար ցանկալի միասնական դասական ուղղագրութեան:

Հեղինակը իր մասնաւոր շնորհակալութիւնն է յայտնում «Հայ դասական մատենագրութեան թուային գրադարանի» աշխատակից՝ Անուշ Սիմոնեանին, իր բժախնդի սրբագրութիւնների համար:

4602020100  
Գ \_\_\_\_\_ 2006 թ.  
704(02)06

ISBN 5-8084-0774-5

© Մխիթարեան հրատարակութիւն, 2006 թ.  
© Հ. Պ. Գոճանեան, 2006 թ.

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

**Դասական** ենք կոչում այն ուղղագրութիւնը, որ մինչեւ 1922 թուականը օգտագործում էր ողջ հայութեան կողմից՝ թէ՛ Հայրենիքում եւ թէ՛ Սփիւռքում, ե՛ր գրաբար, ե՛ր աշխարհաբար, ե՛ր արեւելահայ, ե՛ր արեւմտահայ լեզուի համար:

**Արեղեանական** ուղղագրութիւնը, Մանուկ Արեղեանի կողմից նախապէս պատրաստուած, 1922 թուականին Հայաստանի Համայնավար իշխանութեան հրահանգով պարտադրուեց Խորհրդային Միութեան ողջ սահմաններում՝ հակառակ ժամանակի մտաւորականութեան բողոքին: Արեւմտահայութիւնը, ինչպէս նաեւ իրանահայութիւնը մերժեցին այդ ուղղագրութիւնը եւ շարունակեցին գրել դասականով մինչեւ այսօր:

Արեղեանական անյարմար ուղղագրութիւնը, 1940 թուականին մասամբ սրբագրուելով, ստեղծուեց **Հայաստանեան ուղղագրութիւնը**, որ մինչեւ այսօր օգտագործում է Հայաստանում եւ նախկին Խորհրդային Միութեան երկրներում:

Դասական ուղղագրութեան 1922 թուականի «բարեփոխում» կոչուած խանգարումը մեծ վնաս հասցրեց թէ՛ մեր լեզուին, թէ՛ մեր ազգային գրականութեանը: Այն ոչ միայն կտրեց հայրենի ժողովրդին իր մշակութային ժառանգութիւնից, մինչեւ այդ թուականը ստեղծուած գրաբար եւ աշխարհաբար ողջ գրականութիւնից եւ զրկեց Սփիւռքը Հայրենիքի եւ փոխադարձաբար Հայրենիքը Սփիւռքի 80 տարիների նորագոյն գրական ստեղծագործութիւններից, այլ նաեւ, մոռացութեան մատնելով հայերէնի բառակազմական օրէնքները, բառարմատների եւ ածանցների ստուգաբանական հասկացողութիւնը, արգելք հան-

դիսացաւ լեզուի կանոնաւոր զարգացմանն ու հարստացմանը եւ աղնատեց ու աղքատացրեց արեւելահայերէնը:

Ժամանակն է օր առաջ ազատուել պատմական այդ աղետաբեր սխալից եւ վերադառնալ դասական միասնական ուղղագրութեանը, որը պայմանն է նաեւ մեր ազգային-մշակութային եւ ազգային-քաղաքական միասնականութեան:

Մենք այստեղ ուզում ենք ցոյց տալ, թէ դիւրին է այդ վերադարձը:

## ԴԱՍԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Դասական ուղղագրության կանոնները բացատրելիս մենք գլխատրաբար ներկայացնելու ենք այն մասերը, որ տարբերում են հայաստանեան եւ դասական ուղղագրութիւններում:

### Վ, Ի եւ ՈՒ

Դասական ուղղագրութեամբ վ հնչիւնի համար օգտագործում են վ, ի եւ ու տառերը, շատ յստակ եւ պարզ կանոնների համաձայն:

1. Վ գրում է միայն երկու դէպքում՝ ա) բառասկզբում եւ բ) ո ձայնատրից յետոյ:

ա) Բառասկզբում, բացի ո տառով սկսուող բառերից, գրում է միշտ վ. այսպէս՝ *վազել, վարժ, վառել, վաստակ, վերելք, վերջ, վէճ, վէպ, վէրք, վիշտ, վկայ, վճիռ, վստահ, վտանգ, վրէժ* եւ այլն:

Բարդութեան կամ ածանցումի ժամանակ վ-ով սկսուող բառերը, բնականաբար, այդ վ-ն պահպանում են նաեւ բառամիջում, այսպէս՝ *անվարժ, անվերջ, անվիճելի, արագավազ, բազմավաստակ, բանավէճ, բարձրակիզ, զահավէժ, դիրավառ, զտոհվեր, զօրավար, ընդվզում, կատավարել, մանրավէպ, մատավար, քաղաքավար* եւ այլն:

Վ պահպանում է նոյնպէս կրկնուած բառերի մէջ. ինչպէս՝ *վազվզել, վառվռուն, վետվետում*. եւ բնաձայների մէջ՝ *վրվում, ճրվում* եւ այլն:

բ) Ո ձայնատրից յետոյ գրում է միշտ վ. այսպէս՝ *գովել, գորով, գով, թովել, ժողով, խողովակ, խոստովանել, խորոված, խոովել, ծով, կորով, հովանի, հովի, սովորական, սովորել* եւ այլն:

2. Բառամիջում՝ ընդհանրապես երկու ձայնաւորի միջեւ, եւ բառավերջում՝ ձայնաւորից յետոյ, գրում է միշտ *ւ*.

ա) Բառամիջում՝ *սաւազ, սաւանդել, սաւելի, սաւետիս, քսակահան, բեւեռ, բիրտաոր, գաւառ, գաւիթ, դաւել, դիւան, գաւակ, գաւէշտ, լուսաւոր, կարեւոր, հաւատք, հիւանդ, հոգեւոր, մեծաւոր, շատիղ, վաւերակահան, տեւել, քսուել* եւ այլն:

Օստ քիչ բառեր կան, ուր բառամիջում ձայնաւորի եւ բաղաձայնի միջեւ գրում է *ւ*. Ինչպէս՝ *աղաւնի, մաւթ*, եւ բաղադրեալ բառեր՝ *թեւնոց, հաւկիթ, հաւնոց*:

Բաղաձայնից յետոյ *ւ* ունի բացառաբար բարոք բառը:

բ) Բառավերջում՝ *արեւ, բարեւ, թեթեւ, կեղեւ, տերեւ, սեւ, լաւ, կաւ, հարսեւ, մաւ, թիւ, կոթիւ, հաշիւ, պատիւ* եւ այլն:

Ո-ից յետոյ վ լսուելիս չի կարելի գրել *ւ*, որովհետեւ դա կը լինի պարզապէս ու ձայնաւորը:

Նոյնպէս է եւ *օ* ձայնաւորներից յետոյ *ւ* չի գրում:

Հայաստանեան ուղղագրութիւնում միշտ օգտագործում է *և* տառը, որ է եւ *ւ* տառերի միացումն է, այսինքն՝ եւ: Եթէ *ե*-ից յետոյ արդէն գրում է *ւ*, ի՞նչ դժուարութիւն կայ *ա* եւ *ի* ձայնաւորներից յետոյ էլ գրել *ւ* փոխանակ վ-ի: Դա կը լինի արդէն դասական ուղղագրութիւն:

3. Բաղաձայներից յետոյ վ լսուելիս (այսինքն՝ բաղաձայնից յետոյ եւ ձայնաւորից առաջ) գրում է միշտ ու. *Աստուած, արուեստ, բաւնոր, դժուար, զգուել, զհնոր, զուարթ, թշուառ, ծուարել, կուել, հաստած, հարտած, յօրտած, նուագ, նուէր, շուարել, չուել, ստուար, ստուեր* եւ այլն:

Նոյն կանոնի համաձայն՝ ու-ով են գրում -իւ-ով վերջացող բառերի ածանցումները՝ *ազնիւ-ազնուական, թիւ-թուական, հաշիւ-հաշուել, հովիւ-հովուել, պատիւ-պատուական* եւ այլն:

Նոյնպէս -ու-ով վերջացող բառերից կազմուածները՝ *լեզու-լեզուական, մեղու-մեղուաջան* եւ այլն:

Կրատրական բայերի դերբայական ձեւերը. *ազատուել՝ ազատուող, ազատուած. բացուել՝ բացուող, բացուած, բացուելիք. դատուել՝ դատուող, դատուած, դատուելիք. զինուել՝ զինուող, զինուած. փակուել՝ փակուող, փակուած, փակուելիք:*

Փամանակ ցոյց տուող բառերի հոլովումներ՝ *օր՝ օրուայ, օրուանից. ամիս՝ ամսուայ, ամսուանից. տարի՝ տարուայ. ամառ՝ ամառուայ, ամառուանից:*

### **Ուշադրութիւն.**

Կրատրական բայերի մէջ, ինչպէս եւ այլ բառերում, երկու ու հանդիպելիս առաջին ու-ի փոխարէն կարելի է գրել *ւ*. ինչպէս՝ *խօսում է, հաշուետութիւն, նուիրատութիւն* եւ այլն:

Ուշադրութեան արժանի են վերջին վանկում *վ* եւ *ւ* ունեցող բայերի կրատրական ձեւերը. *գովել՝ գովուել, գովուած, գովում է. գրաւել՝ գրաուել, գրաուած, գրաւում է:*

Ծատ քիչ բառեր ունենք, որոնց մէջ *վ* հնչուող ու-ից յետոյ հարկ է գրել *ը*. ինչպէս՝ *տողընջեան, հոտողտալ, պահողտել, պահողտուք*. եւ բայերի կրատրական ձեւերում՝ *հաշողուել, հաշողուած, պատողուել, պատողուած:*

### **Դիտողութիւն.**

Վերոյիշեալ կրատրական ձեւերի մէջ *ը* ձայնաւորից յետոյ, բնական է, պէտք է գրել *ւ*, ոչ թէ ու (որ գրում է միայն բաղաձայնից յետոյ). այսինքն՝ *պատողուել* եւ ոչ *պատուողուել:*

*Տուիչ (տուող)* բառը ածանցուելիս, օրէնքի համաձայն, կորցնում է ի ձայնաւորը, եւ ու-ն մնում է չ բաղաձայնից առաջ. լինում է՝ *տուչութիւն*: Բայց որովհետեւ ու-ն բաղաձայնից առաջ չի կարելի *վ* կարդալ, գրում ենք՝ *տուչութիւն*:

4. Տողադարձի դէպքում *վ* հնչուող ու-ի փոխարէն ոմանք գրում

են ւ, ինչպէս՝ *զը-ւարթ, ան-ւագ, թը-ւական, ազնը-ւական* եւ այլն: Մենք դեմ ենք այդպիսի վանկատմանը եւ նախընտրում ենք միշտ պահել ու-ն իրեն յաջորդող ձայնատրի հետ՝ ուա, ուե, ուէ, ուի, ուո: Ուստի պէտք չէ երբեք բաժանել *զուարթ, անուագ, անուէր, չուել* եւ այլ մեկուկէս վանկով բառերը, իսկ բազմավանկները բաժանել այսպէս՝ *ագ-անու-կան, ա-զատ-ուել, ար-ուեստ, բան-ուոր, դըժ-ուար, զըզ-ուել, թուա-կան, լեզ-ուա-կան, հատ-ուած, հով-ուել*:

### Գիտողութիւն.

Վերոյիշեալ բառերը վանկատում են նաեւ այսպէս՝ *արուեստ, բա-նուոր, դը-ժուար* եւ այլն՝ ու-ին նախորդող բաղաձայնը միասին առնելով:

### Վարժութիւն 1

Հետեւեալ բառերի մէջ բազմակէտերի տեղ դնել՝ վ, ւ կամ ու՝ կանոնի համաձայն:

...արժ, ...աստակ, ...տանգ, խորո...ած, սո...որական, կորո...ի, ծո..., կողո..., հոլո..., շարժա...ար, քաղաքա...ար, միա...անկ, մանկա...արժ, ան...արժ, ան...այել, ան...արան, ան...երջ, ա...երակ, արե..., խա...ար, տերե..., գա...ազան, հաշի..., բե...եռ, պարգե..., կոի..., տե...ական, լ...ալ, զ...արթ, կալ...ած, պատ...էր, ն...էր, յօդ...ած, սիր...ած, հաշ...ել, հազ...աղէպ:

### Վարժութիւն 2

Կատարել՝ նախորդ վարժութեան պահանջը:

Չա...ակ, հի...անդ, գո...ազդ, գործա...որ, գործա...ար, դիրա...սո, զգ...անք, հաշ...ապահ, պատ...արէր, պատ...ա...որ, սա...ած է, սա...ում է, մտա...որ, մտա...արժ, մտած...ած, գրա...իչ, գրա...ած, գո...ել, գո...ած, հոլո...ել, բանա...էն, ջը-



ր...էժ, հրո...արտակ, ուղե...որ...ել, ար...եստա...արժ,  
լ...աց...ել, Գ...իրել, դիրա...առ, խողո...ակ, խոստո...անել:

### Վարժութիւն 3

Հայաստանեան ուղղագրութեամբ գրուած հետեւեալ բառե-  
րը վերածնել դասական ուղղագրութեան:

Ավագան, ավետել, ավերակ, խավար, խոնավ, կոիվ, պա-  
տիվ, հավասար, արև, արմավ, տերև, վտանգ, վարժ, անվարժ,  
գրավել, զավեշտ, նվագ, սովեր, նավ, սավան, ազնիվ, բարև,  
բավական, ցրվել, քվե, հրովարտակ, սովորական, հաշիվ, սվին,  
նվաճել, զինվոր, կաթված, պատվաբեր, անվանի, կալված,  
պարգև, տևական, հրճվանք, ժողով, վրդովել, քաղաքավար, կա-  
նավարել:

### Ե եւ Է

1. Բառակզբում դասական ուղղագրութեամբ գրուում է ե, եթէ  
հնչում է ե (լատինատառ ye). ինչպէս՝ *եզերք, եղբայր, ե-  
րագ, երկինք, երկիր, երջանիկ*:

Եւ գրուում է է, եթէ հնչում է է (լատինատառ e), ինչպէս՝ *էգ,  
էշ, էջ, էակ, էութիւն* եւ այլն:

2. Բառավերջում գրուում է միշտ է (ոչ երբեք՝ ե). այսպէս՝ *ափսէ,  
բազէ, եթէ, երէ, մարգարէ, միթէ, Նուճէ, Վահէ, թոպէ* եւ  
այլն:

3. ա) Բառամիջում՝ ձայնաորից առաջ, գրուում է է, եթէ այդ է-ն  
պահում է իր հնչիւնը եւ առանձին վանկ է կազմում. այսպէս՝  
*այժմէական, անէութիւն, գործուճէութիւն, թոպէական,  
թէական, քուէարկել, խաբէութիւն, հրէական, մարգարէու-  
թիւն, լեզէոն, պանթէոն, քրէական, քրիստոնէական,*

*քրիստոնէութիւն, կը գրէի, կը խօսէիր, թող վազէիմ եւ այլն:*

բ) Նոյն պայմաններում, այսինքն՝ ձայնաւորից առաջ, եթէ գրենք *ե*, այդ *ե-ն* դասական ուղղագրութիւնում առանձին վանկ չի կազմում, այլ յաջորդ ձայնաւորի հետ միասին դառնում է երկբարբառ՝ մեկ վանկ. այսպէս՝ *ալեակ, ա-տեան, արդեօք, դարձեալ, եղեամ, եօթն, ընտանեօք, մատեան, որդեակ, սեմեակ, քառեակ, Աբեղեան, Աճառեան* եւ այլն, փոխանակ հայաստանեան ուղղագրութեամբ գրելու՝ *ալլակ, ատյան, արդոյք* եւ այլն:

Ուստի եթէ գրէինք՝ *գործունէութիւն, քրիստոնէական, պանթեոն*, այդ *եո-ն*, *եա-ն* եւ *եո-ն* հարկ էր արտասանել մէկ հնչումով, որպէս մեկ վանկ, հայաստանեան ուղղագրութեամբ՝ *յո, յա եւ յո (գործունջութիւն, քրիստոնյական, պանթոյն)*:

4. Բառամիջում (բայց ոչ վերջին վանկում) բաղաձայնից առաջ գրում է միշտ *ե*. ինչպէս՝ *ամեհի, ամեմեւիւն, անհեթեթ, անտիս, աներակ, բերան, բեւեռ, գեղեցիկ, դեղեւել, երեկոյ, երերում, երեւելի, թեթել, թերութիւն, թգեմի, լեզու, խնլացի, ծերունի, կեղել, կեղեքել, կենդանի, հետեւել, ճեմարան, ճերմակ, մետաքս, մեքենայ, մերկել, սեղան, սեմեակ, տեղեկութիւն, փերեզակ* եւ այլն:

Նոյն կանոնի համաձայն՝ *ե-ով* են գրում *-ի-ով* վերջացող բառերի բարդութիւնները. ինչպէս՝ *ալեկոծ (ալի-ք եւ կոծել բառերից)*, այսինքն՝ *ալի-ա-կոծ>ալեկոծ (իս>ե)*. Առյուսպէս՝ *աղեխարշ (աղիք եւ խարշել)*, *այգեպան (այգի եւ պան)*, *բարեսիրտ (բարի եւ սիրտ)*, *բարեկամ (բարի եւ կամք, կամեմալ)*, *հոգեխօս (հոգի եւ խօսել)*, *որդեգիր (որդի եւ գիր, գրել)* եւ այլն:

Միայն եթե բարդութեան երկրորդ բաղադրիչը ձայնաւորով սկսուող բառ է, գրում է է-ով. ինչպէս՝ *հոգէտտ* (*հոգի* եւ *տոնել*), *ոսկէօղ* (*ոսկի* եւ *օղ*):

Ուստի բոլորովին սխալ է գրել՝ *աղէխարջ*, *այգէպան*, *գիմէգործ* եւ այլն:

Նաեւ ի-ով չվերջացող բառերի բարդութիւններում երբեմն ա յօդակապի տեղ գրում է ե. օրինակ՝ *բաժնետէր*, *ծաղկեպսակ*, փոխանակ՝ *բաժնատէր*, *ծաղկապսակ*:

5. Երկու բաղաձայնից առաջ՝ արմատական բառերի մէջ, ընդհանրապէս գրում է ե. այսպէս՝ *աշակերտ*, *արունստ*, *բերդ*, *գովեստ*, *երբեմն*, *թերթ*, *խենթ*, *կեղծ*, *ներկ*, *վերջ*:

Գրաբարում կայ միայն երկու բառ՝ *ի մէնջ* (մեզմից) եւ *ի ձէնջ* (ձեզմից), որ երկու բաղաձայներից առաջ է ունեն:

**Դիտողութիւն.**

Ընթերցողը անշուշտ գիտէ, որ *անէծք*, *զէնք*, *մէջք*, *շէնք*, *օրէնք* եւ այլն բառերի ք-ն արմատական չէ. դա գրաբարի յոգանակերտն է:

6. Վերջին վանկում կամ միավանկ բառերի մէջ կարող է լինել ե՛ւ ե, ե՛ւ է: Այդ ճշտելու համար հարկ է նկատի առնել հետեւեալ օրէնքը.

ա) Գրում է է, եթե ածանցումի կամ բարդութեան ժամանակ այդ տառը փոխում եւ դառնում է ի. ինչպէս՝ *զէս-գիստոր*, *զէր-գիրութիւն*, *դէզ-դիզել*, *դէմ-ք՝ դիմակ*, *դիմադրել*, *դէտ-դիտել*, *կէս-կիսել*, *կէտ՝ կիտադրութիւն*<sup>1</sup>, *կի-*

---

1 Արեւմտահայերէնում ասում են՝ *կիտադրութիւն*. միայն արեւելահայերն են գրում՝ *կետադրութիւն*:

տուած, հանդէս-հանդիսատես, հէզ<sup>2</sup>-հիգուօթիւն, հրա-  
ւէր-հրաւիրել, ձէթ-ձիթենի, նուէր-նուիրել, շէկ-շիկա-  
նայ, շէն-ք-շիներ, պատուէր-պատուիրել, պարտէզ-  
պարտիզպան, սէզ-սիգապանծ, սէր՝ սիրել, սիրուն,  
ստէպ-սսիպել, վէճ-վիճել, վէպ-վիպասան, վէր-ք-վի-  
րաւոր եւ այլն:

Յիշենք նաև Է-ով գրուող բայարմատներ, որ առանձին չեն  
գործածոււմ, այլ միայն բարդութիւններում.

Գէտ՝ գիտուն, գիտնական, գիտութիւն, գրագէտ,  
մասնագէտ.

Լէզ<sup>3</sup> լիզել, պնակալէզ, յարալէզ.

Կէզ՝ կիզել, կիզիչ, հրկէզ, տօթակէզ.

Մէտ՝ միտում, հակամէտ.

Ծէճ՝ շիճել, շինութիւն, շինարար, քարաշէճ.

Ծէջ՝ շիջանել, անշէջ, հրշէջ.

Պէտ՝ պիտանի, պիտոյք, անպէտ.

Վէժ՝ վիժակ, վիժեցնել, գահավէժ, ջրվէժ.

Վրէպ՝ վրիպել, վրիպակ, անվրէպ, ժամանակավրէպ:

բ) Գրոււմ է ե, եթէ ածանցումի կամ բարդութեան ժամանակ  
այն մնում է անփոփոխ. ինչպէս՝ աղեղ (աղեղնաւոր), աս-  
պետ (ասպետական), աներ (աներակ), բելեռ (բելեռել),  
գետ (գետափ), դեղ (դեղարան), դեր (դերասան), թեփ  
(թեփոտ), թէք (թէքուել), ծեր (ծերութիւն), ծեփ (ծեփել),  
կեր (կերակուր), հեր (հերարձակ), հրդեհ (հրդեհել), մեծ  
(մեծագործ), նետ (նետել), պատկեր (պատկերասրահ),

2 Գրոււմ է նաև հէք, որ, սակայն, սխալ է, որովհետև արմատական բառերի  
մէջ ք-ից առաջ է չի հանդիպում:

3 Լէզ, լիզել՝ ինչքան էլ զարմանալի թուայ, կսպ չունեն չեզու բառի  
հետ (տե՛ս Հ. Աճառեան, Արմատական բառարան):

*պետ (պետական), սեր (սերունդ), ստուեր (ստուերա-  
յիւ), վեհ (վեհութիւն)* եւ այլն:

**Տէր, տնօրէն եւ անօրէն** բառերի է-ն ածանցուելիս կամ բարդուելիս դառնում է երբեմն ի, երբեմն՝ ե. այսպէս՝ *տէր՝ տիրել, տիրական, տիրութիւն (տիրութիւն անել), բայց նաեւ՝ տէրութիւն<sup>4</sup>, տերունի*. Այնպէս՝ *տնօրէն՝ տնօրհնութիւն (կարգադրութիւն), բայց նաեւ՝ տնօրենութիւն (տնօրէնի պաշտօնը). անօրէն՝ անօրհնական, անօրենութիւն:*

Այս անկանոնութիւնները, որոնք կային արդէն V դարում, հարկ է նկատել գաւառական ձեւեր:

Միայն երկու բառ կայ՝ *դէ* եւ *թէկն (թիկունք)*, ուր ե ձայնաւորը դառնում է ի՝ *դէ-դիւայիւն, թէկն-թիկնաթոռ*: Պատճառը այն է, որ այդ երկու բառերում արմատի ձայնաւորը է-ն է, բայց գրում է ե, որովհետեւ ւ տառից, ինչպէս նաեւ երկու բաղաձայնից առաջ չի կարելի գրել է: Իսկ ածանցումի եւ բարդութեան դէպքում ձայնաւորը դառնում է ի:

#### **Ուշադրութիւն.**

Կան բարդութիւններ, որ յատուկ իմաստով բարդութիւն չեն, այլ պարզապէս երկու բառի միացում, առանց յօրակապի, կամ միեւնոյն բառարմատի կրկնութիւն. ուստի իրենց արմատական է-ն մնում է անփոփոխ: Այսպէս՝ երկու բառի միացում են՝ *երէց-կիւն, զէնընկէց, էշայծեամ, թէեւ, թէկուզ (եթէ կ'ուզի), թէպէտ (եթէ պէտք լիւնի), կէսօր, շէնշող, վրէժխնդիր, օրէնագէտ, օրէնաստոյց* եւ այլն:

Բայց նոյն բառերով իրական բարդութիւնների մէջ է-ն փոխում է. ինչպէս՝ *երիցագոյն, զինակցութիւն, իշացույ, կիսակործան, շինարար, վրիժագործ, օրինաւոր* եւ այլն:

---

4 Գրում ենք *տերութիւն, տնօրենութիւն* եւ այլն ե-ով՝ կանոնի համաձայն (տե՛ս թիւ 3. եւ 4. օրէնքները):

Միեւնոյն բառի կրկնութիւն են՝ *պէսպէս, տէրտէր* եւ այլն:  
**Դիտողութիւն.**

Հակառակ վերը շեշտուած կանոնների, եթէ այստեղ՝ միացուած կամ կրկնուած բառերում տեսնում ենք բառամիջում բաղաձայնից առաջ է (*եղեցկիւն, զէնընկէց*), դա նշանակում է, որ միացուած բառերը պէտք է նկատել որպէս երկու անջատ բառեր, այսինքն՝ *եղեց-կիւն, զէն-ընկէց*:

գ) Է>ի փոփոխութեան սոյն օրէնքը մեզ համար վստահելի առաջնորդ է՝ ածանցման եւ բարդութեան միջոցով ճշտելու վերջին վանկում Է-ն եւ Ե-ը<sup>5</sup>:

Անորոշութիւն կարող է լինել միայն այն բառերի համար, որոնք չունեն բարդութիւն կամ ածանցում: Այդ սակարաբի բառերը, սակայն, ունեն յատուկ վերջաւորութիւններ, ուստի դժուար չէ դրանք սովորել:

Այստեղ դնում ենք Է-ով գրուող բառեր, որոնք չունեն ածանցում կամ բարդութիւն.

*Արդէն* եւ *այծմէն*՝ *արդ* եւ *այծմ* բառերի բացառական հոլովը (գրաբար եւ արեւմտահայերէն), որ գրում է միշտ Է-ով:

*Ութօրէք, երեխէք, տղէք, հէնց* եւ այլն ուսմկօրէն ձեւեր են (փոխանակ գրաբար՝ *ութօրեայք, երեխայք, տղայք*, միջին հայերէն՝ *հայնց*): Նոյնը եզակի եւ յօդով՝ *երեխէն, տղէն* (փոխանակ՝ *երեխայն, տղայն*):

Նոյնպէս խօսակցական ձեւեր են՝ *արժէք, կողպէք, ջրօրհնէք* եւ այլն (փոխանակ՝ *արժանք, կղպանք, օրհնանք*):

---

5 Այն ընդհանուր կարծիքը, թէ Է>ի փոփոխութեան սոյն կանոնից կամ շատ բացառութիւններ, մենք ճիշտ չենք գտնում: Այս մասին տե՛ս «Սրբագրութիւններ եւ առաջարկներ» բաժնում:

Դարձեալ՝ *Տէր, մէր, գէլ, ծէր* եւ այլն (փոխանակ՝ *հայր, մայր, գայլ, ծայր*):

Ածանցներ.

- եղէն*՝ *բանջարեղէն, խմորեղէն, ոսկեղէն* եւ այլն գրաբարում սեռականը լինում է՝ *ոսկեղինահ, բանջարեղինաց*:
- երէն/արէն*՝ *հայերէն՞, յունարէն*.
- օրէն* (օրէնք բառից)՝ *արդարօրէն, փաստօրէն*.
- չէք*՝ *աւետչէք, բերողչէք*. գրաբար *աւետչեայ* (բարի լուր բերողին տրուելիք վարձատրութիւն) բառից, յոգնակի՝ *աւետչեայք* եւ դրանից՝ *աւետչէք*:
- սէս*՝ *մեծասէս, յայտնասէս*:

Բայերի խոնարհման մէջ է գրում է միայն հետեւեալ դէպքերում.

ա) *Ներկայ, ապառնի* եւ հրամայական ձեւերի յոգնակի երկրորդ դէմքը՝ *կը խօսէք, եթէ խօսէք, պիտի խօսէք, խօսէ՛ք, կարդացէ՛ք*:

բ) *Անկատար* եւ *ապառնի* եզակի երրորդ դէմքը՝ *կը գրէր, եթէ գրէր, պիտի գրէր*:

Իսկ՝ *կը գրէի, կը գրէի՞նք* եւ այլն (ձայնաւորից առաջ՝ է) յիշել ենք արդէն վերը Աշուած թիւ 3.ա կանոնում, ուստի հարկ չկայ յիշել:

Բացի այստեղ Աշուածներից, բայերի խոնարհման բոլոր ձեւերի մէջ միշտ գրում է՝ *ե*:

---

6 Թէեւ ունենք *հայերենախօս* բարդութիւնը, ուստի գրելու էինք *հայերենահ*, բայց -*եղէն* ածանցի նմանութեամբ, նաեւ պարզելու եւ դիւրացնելու համար կարծում ենք, որ կարելի է գրել -*երէն*:

Նոյնպէս գոյականների յոգնակի մասնիկները՝ -եր, -ներ (դաշտեր, պարտէզներ եւ այլն) գրում են միշտ ե-ով:

### Վարժութիւն 1

Հետեւեալ բառերի մէջ դրուած բազմակէտերի տեղ դրէք ե կամ է՝ կանոնի համաձայն (կանոն՝ 1.-3.):

...ակ, ...գ, ...ջ, ...ըջանիկ, ...րկիր, ...րկու, ...ինք, ...իք, ...րգ, ...րկինք, բազ..., ...թ..., Նուն..., առաք...ալ, ընտր...ալ, սար...ակ, քրիստոն...ական, թոպ...ական, այծ...ամ, մատ...ան, այծմ...ական, գործուն...ութիւն, քրիստոն...ութիւն, Մամիկոն...ան, Ծատոյ...ան, խաբ...ութիւն:

### Վարժութիւն 2

(կանոն՝ 4.-6.)

Տ...ր, նու...ր, օր...նք, բ...րդ, վ...րջ, վ...րք, վ...հ, հանդ...ս, հրաւ...ր, բար...ւ, տ...ր...ւ, պարտ...գ, տ...սակ...տ, նորավ...պ, դ...դ, դ...տ, գ...տ, թ...րթ, ջ...րմօր...ն, բանջար...դ...ն, ...գ...րք, ...կ...դ...ցի, գ...ր...զման, բար...բ...ր, հր...շտակ, ան...ր...տոյթ, հ...նատ...ս, աշակ...րտ, արու...ստ, գով...ստ, հրաժ...շտ, շ...շտ, ջ...րմ, ս...րմ, ն...րկ, խօս...՛ք, կարդաց...ք:



## ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Քերականության բոլոր գրքերում ասում է, որ է>ի փոփոխության օրենքից կան շատ բացառություններ եւ յիշում են՝ *աղետ, աղուէս, ամէն, պատճէն, պարէն* եւ այլն, որոնց է տառը ածանցունելիս կամ բարդունելիս չի դառնում ի, այլ ե. այսպէս՝ *աղետաբեր, աղունասարոշմ, ամենամեծ, պատճենահանում, պարենատր* եւ այլն:

Մենք համամիտ չենք ասուածին եւ գտնում ենք, որ վերոյիշեալ բառերը ոչ թէ բացառութիւն են կազմում, այլ պարզապէս սխալագրութիւն են եւ պէտք է գրուեն ե-ով՝ *աղետ, աղուէս, ամէն, պատճէն, պարէն* եւ այլն:

Ուշադրութեան արժանի է, որ բացառութիւն համարուած բառերի մեծ մասը վերջանում է -էն, -էս: Յիշենք, որ գրաբարում եւ արեւմտահայերէնում բացառական հոլովը վերջանում է է-ով, որի վրայ աւելացնելով *ն* եւ *ս* դիմորոշ յօդերը լինում է -էն եւ -էս. օրինակ՝ *ի տաւէ, ի տաւէն, ի տաւէս*: Կարծում ենք, որ բացառականի այդ -էն եւ -էս վերջաւորութեան ազդեցութեամբ է, որ ձեռագրերում վերջին վանկում ամեն տեղ գրուել է է: Դրա համար էլ քերականութեան գրքերում ասում է, որ *ն-ից առաջ օրէնքը պահանջում է՝ է*:

Չենք ուզում այս գրութիւնը ծանրաբեռնել երկար բացատրութիւններով: Հայերէն ձեռագրերով զբաղուողները գիտեն, թէ ինչպիսի ուղղագրական խառնակութիւն կայ այնտեղ: Մեր հնագոյն ձեռագրերը IX դարից են, իսկ VII դարում արդէն է-ի եւ ե-ի հնչիւնը նոյնացել էր, եւ օրինակողները գործածում էին այդ ձայնաւորները մեկը միւսի տեղ անխտիր: Ուստի այս հարցում ձեռագրերին ամենեւին չի կարելի վստահել:

XVIII-XIX դարերում մեծ ջանք արուեց սրբագրելու համար ձեռագրական սխալները եւ երեսն հանելու դասական ուղղա-

գրութիւնը: Բայց այսօր էլ դասական ուղղագրութիւնը դէռ բոլորովին ազատ չէ սխալներից, որ կարօտ են սրբագրութեան եւ դասանաւորապէս՝ ե-է կապակցութեամբ:

ա) Քանի որ հին ձեռագրերի ուղղագրութիւնը վատահելի չէ, կասկածելի բառերի համար առաջնորդուենք վերոնշեալ թիւ 6. կանոնով (է-ն դառնում է ի, եւ ե մնում է անփոփոխ):

Սոյն կանոնը շատ հաստատուն է: Վերը յիշեցինք *դէ* եւ *թեկն* բառերը, որ թէեւ ե-ով են գրուում ւ տառի կամ երկու բաղաձայնի պատճառով, բայց որովհետեւ արմատի ձայնաւորն է է, ածանցումի եւ բարդութեան դէպքում դառնում է ի՝ յարգելով կանոնը:

Ուստի այն բոլոր բառերը, որ ներկայումս ընդունուած դասական ուղղագրութեամբ գրուում են է-ով (կամ անորոշ են, այսինքն՝ թէ՛ է-ով, թէ՛ ե-ով), բայց բարդուելիս կամ ածանցուելիս ձայնաւորը չի դառնում *ի*, պէտք է սրբագրել եւ գրել *ե*-ով:

Սոյն կանոնի համաձայն՝ սրբագրում ենք հետեւեալ բառերը (որոնք առ այսօր գրուում են է-ով) եւ, որպէս արդարացում, իւրաքանչիւր բառի դիմաց դնում ենք նրա ածանցումը կամ բարդութիւնը:

*Ախտաժեստ՝ ախտաժեստութիւն.*

*Աղետ՝ աղետաբեր* (թէեւ գրուում է նաեւ *աղիտաբեր*, բայց դա անելի նոր է՝ է>ի օրէնքին ենթարկելու նպատակով շինուած, եւ սխալ է, որովհետեւ գրաբարում յոգնակի սեռականը լինում է՝ *աղետից*): Նոյնն է հաւանօրէն *աղատ* (*աղիողորմ լացի ձայն*) բառի հետ: Ծանօթ է, որ ա-ը եւ ե-ը լծորդ են:

*Աղունես՝ աղունեսադորշմ.*

Ամեն <sup>7</sup>	ամենագեղեցիկ.
Աշխատ՝	աշխատածի.
Բեհեզ՝	բեհեզեայ.
Գեզ	(=ճեղք)՝ գեզութիւն.
Գեշ՝	գեշութիւն (գեշ՝ առաջացել է գարշ-գարշելի բառից. ա-ը եւ ե-ը լծորդ են). Ուրիշ է գէշ (դիակ), որից՝ գիշակեր, գիշատիչ.
Գմբեթ՝	գմբեթաւոր. Եղեզ՝ Եղեզնուտ, եղեզնածոր. գրաբարում ե-ղեզն բառն է, իսկ երկու բաղաձայնից առաջ է չի գրում: Հնագոյն ձեռագրերն ունեն են: Թեկն Երկու բաղաձայնից առաջ է չի գրում, թէեւ արմատում ունի է, ինչպէս վերը յիշեցինք:
Խայտաբղետ՝	խայտաբղետութիւն.
Խեննշ՝	խեննշութիւն. Խնչ (=ճեցուկ, մոյթ)՝ խնչակ. Առյճն է խաչ բառի հետ (ա-ը եւ ե-ը լծորդ են):
Հելլեճ՝	հելլեճաբանութիւն.
Հրեշ՝	հրեշայիւն. Առյճն է հրաշք բառի հետ (ա-ը եւ ե-ը լծորդ են):
Յաւերժ՝	յաւերժական. երկու բաղաձայնից առաջ է չի գրում:
Պատճեն՝	պատճենահանում (պատճեան ձեւից).
Պարեճ՝	պարեճաւոր.
Պարետ՝	պարետայիւն.
Վեստ՝	երկու բաղաձայնից առաջ է չի գրում:

7 Երբայերէն բառը, ճշմարիտ կամ թող չիճի իմաստով, կարելի է գրել՝ ամէն:

Հետեւեալ բառերը, որոնք չունեն ածանցում կամ բարդութիւն եւ առ այսօր գրում են է-ով կամ անորոշ են, հարկ ենք համարում սրբագրել եւ գրել ե-ով:

- Աղեկ**<sup>8</sup>            անր բառ է՝ առաջ եկած *աղու* բառից՝ *-եակ* ածանցով (Աճառեան, Արմ. բառ.). եա >ե:
- Գեթ**՝            անյնն է գրաբար *եեթ* (*միայն*) բառի հետ:
- Երբեք**՝          գրաբարում կան անյնանման՝ *ուրեք*, *ուստեք*:
- Երեկ**            (=մէկ օր առաջ)՝ անյնն է *երեկոյ* բառի հետ. համեմատել՝ *վաղ* (*կանուխ*) եւ *վաղը* (*միւս օրը*), (Աճառեան, Արմ. բառ.):
- Մեկ**՝            յառաջ եկած *միակ* բառից. իա >ե:
- Ծահեան**        (=բազէի տեսակ)՝ գրաբարում սեռ.՝ *շահեանի*.
- Չեզոք**՝          յունաբան արուեստական բառ՝ ոչ թէ *չէ-զ-ոք*, այլ *չ-եզ-ոք* ձեւից՝ *եզ=մեկ*:
- Վետ**            (=ալեակ)՝ անյնն է *գետ* բառի հետ. *վետովետում*:

**Ածանցներ.**

- աւետ**՝          ընչաւետութիւն, արդիւնաւետութիւն.
- կեան**՝          *կոճկեան*՝ *կոճկեանիկ* (անյն ածանցով անշուշտ նաեւ այլ բառեր, ինչպէս՝ *հիւսկեան*, *ծակոտկեան*. վերջինս գրուած է նաեւ՝ *ծակոտկեան*):
- եան**՝          *ծուեան*, *նկարեան*: Փաստ չունենք, որ այս բառերը պէտք է գրուեն է-ով, որովհետեւ չկան ո՛չ ածանցում-

---

8 Արմատական բառերում բ, դ, թ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, շ, ո, վ, ի, փ, ք բաղաձայներից առաջ է չի գրում, այլ՝ ե: Բացառութիւն են՝ *ձէթ* եւ *շէկ*:  
 Է կարող է գրուել միայն՝ գ, գ, ժ, մ, ն, շ, ս, շ, ս, տ, ր, ց բաղաձայներից առաջ:

ներ, ո՛չ բարդութիւններ եւ ո՛չ հոլովուած ձեւեր. բայց  
նախորդի նմանութեամբ կարծում ենք, որ այդպէս  
ճիշտ է: *Ծուեմ*, թերեւս, որպէս *ծի* (*պատասիկ*) բա-  
նի յոգնակիմ, առաջացած լինի *ծուեան* ձեւից:

-եմք՝ *խոնջեմք-խոնջանք* (ա-ը եւ ե-ը լծորդ են).

-եցք՝ *ունեցք*:

բ) Յատուկ անունները, մասնաւանդ՝ -ել-ով, -էմ-ով, -էս-ով վեր-  
ջացողները, ընդհանրապէս գրում են է-ով, բայց նրանց ա-  
ծանցումները՝ ե-ով կամ ի-ով. ինչպէս՝ *Գաբրիէլ-Գաբրիէ-  
լեան*, *Դանիէլ-Դանիէլեան*, *Արսէն-Արսենեան*, *Սորէն-  
Սորենեան*, բայց նաեւ՝ *Յովհաննէս՝ Յովհաննեսեան* կամ  
*Յովհաննիսեան*, *Ներսէս՝ Ներսեսեան* կամ *Ներսիսեան*,  
*Ծահէն՝ Ծահենեան* կամ *Ծահիբեան*:

Նախ՝ -ել-ով վերջացող յատուկ անունների համար պէտք է  
ասենք, որ չկայ ոչ մի հայերէն բառ, որ լ-ից առաջ է ունենայ (-  
ել)՝: Գրաբար ձեռագրերում թէեւ վերոյիշեալ անունները՝ *Գաբ-  
րիէլ*, *Դանիէլ* եւ այլն գրում են է-ով, բայց հոլովուած ձեւերում  
ունեն միշտ ե՝ *Գաբրիէլի*, *Դանիէլի*: Դարձեալ՝ *Արիստոտել* եւ  
ո՛չ *Արիստոտէլ*, *Առաքել* (*առաքեալ* ձեւից) եւ ո՛չ *Առաքէլ*:

Իսկ -էն, -էս վերջաւորութիւնների մասին վերը արդէն խօ-  
սեցինք: Այստեղ էլ գրաբարում հոլովուելիս է-ն դառնում է ե՝  
*Արսէն-Արսենի*, *Խորէն-Խորենայ*, *Ներսէս՝ Ներսեսի* կամ  
*Ներսիսի* եւ այլն:

Նոյնպէս *Յովսէփ* անունը թէեւ՝ ձեռագրերում գրում է է-ով  
(սեռականը՝ *Յովսէփայ*), բայց հայերէն բառերում փ-ից առաջ է  
չի հանդիպում:

---

9 Էլ (*այլ*), գէլ (*գայլ*) գաւառական ձեւեր են, թէեւ արդէն ընդունուած:

Ուստի նշուած յատուկ անունների է-ով գրութիւնը գտնում ենք բոլորովին անհիմաստ: Մեր առաջարկն է՝ յատուկ անունները գրել ընդհանրապէս է-ով եւ է-ն պահել միայն այնտեղ, ուր հայերէն լեզուի օրէնքը այդ պահանջում է, այսինքն՝ բառակցքում՝ եթէ հնչւում է է՝ *էմիլ*, բառամիջում՝ ձայնատրից առաջ՝ *Թէոդորոս*, *Թադէոս*, եւ բառավերջում՝ *Շաքէ*, *Վաչէ*:

## ԿԱՐԵԻՈՐ ՍԿՋԲՈՒՆՔ

Հայ լեզուաբանության համար ե-ով կամ է-ով գրությունը կարելոր է այն բառերի համար, որ գործածուել են V դարում: Որովհետև յաջորդ դարերում, երբ և է տառերի հնչումը արդեն նույնացել էր (VII դարում դա փաստ է արդեն), և առանց որևէ սկզբունքի ամեն տեղ անխտիր գրում էին է կամ ե, օտար լեզուներից նոր փոխառնալ բառերում է-ի և ե-ի տարբերությունը կորցնում է իր իմաստը: Դրա համար պետք է ընդունել հետևյալ սկզբունքը՝

*Նորագոյն շրջանի օտար լեզուներից փոխառնալ բառերում և անուններում է-ի գործածությունը անհմաստ է: Նման բառերն ու անունները ընդհանրապես պետք է գրել ե-ով և է-ն պահել միայն այնտեղ, ուր դա պահանջում են հայ լեզուի օրենքները, ինչպես վերը յիշեցինք:*

Այդ սկզբունքով սրբագրում ենք և ե-ով ենք գրում, հետևյալ բառերը, որ առ այսօր գրում են է-ով (սրանց ձայնաւորը ածանցուելիս կամ բարդուելիս չի փոխում):

*Շեր (= ժողովրդական երգ)*՝ արաբերէնից փոխառութիւն.

*Շրեշ (= սոսիւնձ)*՝ պարսկերէնից ու լեզուաբանութիւն.

*Փեշ*՝ պարսկերէնից ու լեզուաբանութիւն:

Թէև շատ երկարեց և է է ձայնաւորների մասին մեր այս գրութիւնը, իրականում շատ յստակ և պարզ են կանոնները: Նորից կարդացէ՛ք 1.-5. կանոնները և կը համոզուէք:

6.-րդ կանոնն էլ յստակ և պարզ է և չունի կարծեցեալ բացառութիւնները: Հէնց այդ փաստելու և այդ էլ դիւրացնելու համար ստիպուեցանք երկարացնել այս բաժինը:

Անորոշութիւն կայ միայն այն շատ սակաւաթիւ բառերի համար, որոնք չունեն ածանցում կամ բարդութիւն. դրանք էլ դիւրին է սովորել իրենց յատուկ վերջաւորութիւններից:

Այս սրբագրութիւնները եւ առաջարկները կատարելիս թէեւ առաջնորդուել եմ միայն ուղղագրական սկզբունքներով, սակայն սոյն սրբագրութիւններով միաժամանակ արել եմ այն, ինչ որ հայաստանեան ուղղագրութեան հետետորդները կարող էին արդարօրէն պահանջել միասնական դասական ուղղագրութեան վերադառնալու համար:

## ԻԻ եւ ԵԱ, ԵՕ

1. Դասական ուղղագրութեամբ գրում ենք՝ *ալիւր*, *անկիւն*, *բարութիւն* եւ այլն (փոխանակ հայաստանեան ուղղագրութեամբ՝ *ալլուր*, *անկղուն*, *բարութթուն* եւ այլն):

Դասական ուղղագրութեամբ բաղաձայնից առաջ իւ-ը ունի ի+ու հնչիւնը՝ որպէս երկբարբառ, այսինքն՝ ի եւ ու ձայնաւորները արտասանւում են մեկ հնչումով, որպէս մեկ վանկ (հայաստանեան ուղղագրութեամբ՝ յու):

Լեզուաբանները համաձայն են, որ V դարում բաղաձայնից առաջ իւ-ը հնչում էր այնպէս, ինչպէս հնչում է այսօր վերոյիշեալ *ալիւր*, *անկիւն*, *բարութիւն* բառերում:

(Եթէ Մեսրոպ Մաշտոցը այդ հնչիւնի համար գրեր իու, արտասանելու էինք ի եւ ու՝ որպէս երկու վանկ: Ուստի նա գիտակցաբար դուրս է հանել ո տառը եւ գրել է իւ, որպէսզի, իբրեւ երկբարբառ, արտասանենք մեկ հնչումով):

Այլ օրինակներ՝ *աղիւս*, *առիւծ*, *արդիւնք*, *արիւն*, *քիւր*, *քիւրենդ*, *գիւղ*, *գիւտ*, *դիւրիւն*, *թիւր*, *կորիւն*, *հարիւր*, *հիւթ*, *հիւսել*, *ձիւն*, *միւս*, *նիւթ*, *փիւն*, *ուրախութիւն*, *կրթութիւն* եւ այլն. նաեւ բառասկզբում՝ *իւղ*, *իւրացնել*, *իւրաքանչիւր*:



2. Վերը՝ 3.բ-ում, արդեն յիշեցինք, որ *ձայնաւորներից* առաջ ե-ը կորցնում է իր հնչիւնը եւ ձայնաւորի հետ միասին կազմում է երկբարբառ: Ընդհանրապէս ա եւ օ ձայնաւորներից առաջ ե-ը կազմում է եա եւ եօ երկբարբառները (այսինքն՝ հայաստա-նեան ուղղագրութեամբ՝ յա եւ յո):

Նորից յիշենք օրինակները՝ *ալեակ, ատեան, արդեօք, դարձեալ, եղեամ, եօթ, ընտանեօք, մատեան, որդեակ, քա-նեակ, Աճատեան, Աբեղեան* եւ այլն:

Միայն օտար բառերում կամ անուններում եա, եո գործած-ում են նաեւ բառասկզբում. ինչպէս՝ *եաթաղան, եաման, եայ-լա, եար, Եորք* եւ այլն:

Յայտնի է, որ *ուրախութիւն-ուրախութեան, արիւն-արեան* ենթարկում են նոյն հոլովումին, ինչպէս՝ *տուն-տան, շուն-շան, այսինքն՝ ուրախութ(ի)ուն-ուրախութ(ի)ան, ար(ի)ուն-ար(ի)ան*: Եթէ Մետրոպ Մաշտոցը գրէր *ուրախութիան*, այդ իս-ն կարդա-լու էինք ի եւ ա՝ որպէս երկու վանկ, ուստի, գրել է *-եան*, որպէս-զի հնչուի մեկ վանկով. *ուրախութեան, արեան*. նոյնպէս՝ *ան-կիւն-անկեան, ձիւն-ձեան, սիւն-սեան* եւ այլն:

### Վարժութիւն

Հայաստանեան այս ուղղագրութիւնը վերածե՛լ դասականի.

Աղբյուր, անյուն, արդյունք, բյուրեղ, գոչյուն, եղջյուր, լոու-թյուն, հյուսել, մեծություն, յուղոտ, յուրաքանչյուր, դոյակ, կյանք, մատյան, տաննյակ, դարձյալ, որդյակ, հարստության, պետու-թյան, Ավետիքյան, Բաղրամյան, ընտանյոք, արդյոք:

### -ՈՅ

Դասական ուղղագրութեամբ գրում է *բոյն, գոյն, խարոյկ, հաճոյք* եւ այլն (փոխանակ հայաստանեան ուղղագրութեամբ՝ *բոյն, գոյն* եւ այլն):

Դասական ուղղագրութեամբ *բաղաձայնից* առաջ -ոյ-ը հնչում է այնպէս, ինչպէս հայաստանեան ուղղագրութեամբ՝ ույ-ը:

Այստեղ էլ համաձայն են լեզուաբանները, որ *բոյն, գոյն* եւ այլ բառերը V դարում էլ այնպէս էին արտասանում եւ գրում, ինչպէս մենք ենք արտասանում եւ գրում դասական ուղղագրութեամբ:

(Վերը նշուած բառերի մէջ բարդութեան կամ ածանցումի ժամանակ ոյ (ու+ի) լինում է ու, այսինքն՝ օրէնքի համաձայն՝ կորցնում է ի կիսաձայնը. այսպէս՝ *բոյր-բուրաստան, գոյն-գունաւոր* եւ այլն: Եթէ այս -ոյ-ը հնչուէր ինչպէս լատինատառ *oy*, բարդութեան ժամանակ չէր դառնայ ու):

Այլ օրինակներ՝ *արտոյտ, բոյս, բոյր, դոյլ, երեւոյթ, գրոյց, թոյլ, թոյն, լոյս, ծոյլ, խնջոյք, կահոյք, կոյս, կոյր, համբոյր, հանգոյց, հաւաքոյթ, պտոյտ, մակոյկ, նոյն, փոյթ, քոյր* եւ այլն:

Եթէ համաձայն ենք, որ Մեսրոպ Մաշտոցը հայերէնի հնչիւններին համապատասխան կատարեալ ուղղագրութիւն է ստեղծել եւ միաժամանակ ընդունում ենք, որ իւ, եա, ոյ երկբարբառները V դարում էլ հնչում էին այնպէս, ինչպէս հնչում է այսօր, ուրեմն բոլորովին անիմաստ էր դրանք փոխարինել *յու, յա, ույ* տառերով, ինչպէս գրում է հայաստանեան «բարեփոխուած» ուղղագրութեամբ:

Նոյնը կարելի է ասել նաեւ վ, ու, ի տառերի համար, որ հայաստանեան ուղղագրութեամբ վերածուել են միայն վ-ի, հակառակ՝ որ այնքան յստակ եւ պարզ է դրանց գործածութիւնը, ինչպէս տեսանք:

## Վարժութիւն

Հայաստանեան այս ուղղագրութիւնը վերածե՛լ դասականի:  
Արտույտ, գրքույկ, գրույց, կահույք, մակույկ, յույս, ձանձ-  
րոյթ, ճաշկերոյթ, պտույտ, վիրաբույժ, ցույց:

### Յաւելեալ Յ

Բառավերջում ընդհանրապէս ա կամ ո չի լինում, այլ աւե-  
լացնում ենք յ տառը, որ չի արտասանուում. այսպէս՝ *արքայ, ա-  
կամս, անխնայ, բացակայ, երեխայ, ծառայ, հսկայ, սպայ,  
վկայ, տղայ, երեկոյ, յարգոյ, ձուլածոյ, պահածոյ* եւ այլն:

Միայն միավանկ բառերի մէջ այդ յ-ն արտասանուում է,  
ինչպէս՝ *բայ, հայ, ճայ, նայ, պայ, վայ, խոյ, Նոյ*. բայց ո՛չ բայե-  
րի մէջ՝ *կը գայ, կայ, կը տայ*:

Բացառաբար յ չունեն միայն՝

ա) բայերի հրամայական եղանակը. *գնա՛, խաղա՛, կարդա՛*  
(գրաբարում՝ *կեցո՛, արժանացո՛*), բայց ո՛չ ըղձական ե-  
ղանակը՝ *թող գնայ, թող կարդայ*:

բ) մի քանի բառեր՝ *ահա, ապա, սա, դա, նա, սրա, դրա,  
նրա*.

Նոյնպէս՝ *այո, քո*.

գ) յատուկ անուններ՝ *Աննա, Սիմա, Երոպա, Գերմանիա*.  
բայց հայերէն իմաստային յատուկ անուններին յ-ն  
աւելացում է . օրինակ՝ *Հրաչեայ*:

դ) օտար բառեր՝ *աղա, փաշա*:

Սակայն վերջինները հոլովուելիս առնում են յ՝ *Աննայի, Ե-  
րոպայի, փաշայի* եւ այլն:

Եթէ ա եւ ո ձայնատրոններին յաջորդելու է ե, պէտք է ե-ից ա-  
ռաջ յ աւելացնել. այսպէս՝ *դայեակ, հայեացք, ախոյեան, Բա-  
լայեան, Սարոյեան* եւ այլն:

Այս նշուած բառերի համար ե-ը անհրաժեշտ է. չի կարելի գրել՝ *դայակ, հայացք, ախոյան, Բալայան*:

Գրաբարում սոյն բառերի սեռականը լինում է՝ *դայելի, ախոյեանի*, որ ենթադրում է ուղղական հոլովում՝ *դայեակ, ախոյեան*:

Վերցնենք ուրիշ օրինակներ՝ *կայարան* եւ *կայեան* բառերը. առաջինը սեռական հոլովում լինում է՝ *կայարանի*, այսինքն՝ ուղղականն է՝ *կազ+արան*, իսկ երկրորդը՝ *կայեանի*, այսինքն՝ ուղղականը՝ *կազ+եան*:

### Վարժութիւն

Հետեւեալ բառերի մէջ դրէ՛ք յ, ուր պակասում է.

Ահա, կը գա, վկա, խաբէքա, թող երթա, գնա՛, երեխա, ապագա, Երոպա, հաւատա՛, ակամա, անխնա, սա, նրա, ներկա, մերձակա, մեքենա, ծառա, Սեդա, Մարթա, կը խոստանա, հսկա, պարագա, երեկո, մեծարո, այո, յետո, անհաճո, քո, ձուլածո, յարգո:

### ԿԸ

Բաղաձայնով սկսուող բայերի առջեւ կը մասնիկը նախընտրելի է գրել առանձին եւ չմիացնել բային՝ կը *խօսեն*, կը *գրէք* (ո՛չ *կխօսեն*, *կգրէք*):

Այստեղ կարելի է առարկել, թէ ինչու չ-ն միացում է բային, իսկ կ-ն պէտք չէ միացուի, այլ գրուի առանձին կը: Բայի առջեւ չ դնելով՝ կազմում ենք նրա ժխտականը եւ կարող ենք գրել. օրինակ՝ *խօսել-չխօսել*: Իսկ կը դնում ենք բայի պարզ ձեւի առջեւ, որը չունի *կխօսել* ձեւը:

Ձայնաւորով սկսուող բայերի դէպքում՝ կ՛*ասեն*, կ՛*իմանաս*, կ՛*երթաք* եւ այլն կը-ն միացում է բային եւ գեղչուած ը-ի տեղ ա-

պաթարց է դրում: Դա կարելոր է պարզ հասկացողութեան համար, որ վերոյիշեալ բայերը *կխօսել, կասել, կիմանալ* չեն:

Նաեւ՝ *զ, շ, ս* բաղաձայն տառերով սկսուող բայերի առջեւ, թէեւ *ը-ն* հնչում է արտասանութեան ժամանակ, կը-ն գրում է առանձին՝ կը *ստանամ, կը սկսէք* եւ այլն, բայց կարդացում է միասին՝ որպէս մէկ բառ (*կըստանամ*):

## Հ եւ Յ

Դասական ուղղագրութեամբ բառակզբում *յ* եւ *հ* նոյն հնչիւնը ունեն, եւ շատ անգամ *հ* լսուելիս գրում է *յ՝ յամառ, յայտնի, յաջող, յետոյ, յիշատակ, յոգնակի, յորդորել*, եւն:

1. **Բաղաձայնից առաջ**, բացի *ղ* տառից, գրում է *հ՝ հլու, հմայել, հնազանդ, հպարտ, հսկայ, հրաման* եւ այլն:

Միայն *ղ* տառից առաջ գրում է միշտ *յ՝ յղի, յղել, յղկել, յղփանալ*:

Իսկ *ս-ից* առաջ միակ բացառութիւնն է՝ *յստակ*, այլապէս գրում է միշտ *հ՝ հսկայ, հսկել* եւ այլն:

2. **Ջայնաւորից առաջ** չկան ճշգրիտ կանոններ իմանալու համար, թէ երբ է գրում *հ* կամ *յ*: Բայց եթէ գիտենք բառի ծագումը, հարցը կը դիւրանայ. օրինակ՝ *Յակոբ, Յովսէփ, Յովհաննէս, Յովնան* անունները հրէական ծագում ունեն եւ օտար լեզուներում չեն գրում *հ-ով*, այլ՝ *յ-ով* կամ նման տառով. օրինակ գերմաներէն՝ *Jakob, Josef, Johannes, Jonas*:

Նոյնպէս օտար ծագում ունեն՝ *յունուար, յունիս, յուլիս, Յասմիկ, յակիմոթ, յրբելեան* եւ այլն եւ *հ-ով* չեն գրում նոյն լեզուներում:

Նաեւ հայերէն որոշ բառերի ծագումը յայտնի է՝ *յանձնել* (անձ բառից), *յանցանք* (անցնել), *յաջող* (աջ), *յարգել* (արգոյ,

մեծարգոյ), յարդարել (արդ, զարդ), յարձակուել (արձակ), յաւելիեալ (աւելի), յակացէ (ակն), յիրաւի (իրաւ), յուղարկել (ուղի եւ արկացնել բառերից) եւ այլն:

Ինչպէս օրինակները ցոյց են տալիս, եթէ բառասկզբի յ-ն հանելով՝ մնում է բառի արմատը, ուրեմն բառը գրում է յ-ով, որովհետեւ յ-ն հնչիւնափոխուած ի նախդիրն է:

3. Կան բառեր, որ գրում են թէ՛ հ-ով եւ թէ՛ յ-ով, բայց տարբեր իմաստով. դրանք լեզուի հարստութիւն են, եւ հարկ է առանձին սովորել: Յիշենք՝

համր –	մուճշ.	յամր –	դանդաղ.
հանգել –	մարել, շիջանել.	յանգել –	վերջանալ.
հաջող <sup>10</sup> –	շան ձայն հանող.	յաջող –	արդիւնատր.
հարկ –	տուրք, անհրա- ժեշտ.	յարկ –	տանիք, ծածկ.
հետագայ –	ետեից եկող.	յետագայ –	յետոյ եկող.
հոյզ –	հիւթ.	յոյզ –	յուզում, խոովք.
հոյլ –	խումբ.	յոյլ –	ծոյլ.
հոյն (հոն) –	պտուղ.	Յոյն –	Հելլեն, յոյն ագգ:

4. Ընդհանրապէս աւելի շատ բառեր գրում են հ-ով քան յ-ով: Այդ պատճառով այստեղ բերում ենք միայն յ-ով գրուող գործածական բառերի ցուցակը.

Յագ(ենալ)	յախճապակի	յախուոն	յածել
յակիւնթ	յաղթ(ել)	յաճախ	յաճախել

---

10 Սխալ է շան ձայնի համար գրել *հաչել*, որ ուրիշ իմաստ ունի, այսինքն՝ *հատաչել*:

յաճախորդ	յամառ	յամենալ	յամր
յայտ	յայտնի	յանգ	յանգել
յանդիման	յանդիմանել	յանդուզն	յանկարծ
յանկերգ	յանկուցիչ	յանձանձել	յանձնատու
յանձնել	յանցանք	յապաղել	յապառել
յաջող	յաջորդ	յառաջ	յառել
յասմիկ	յատակ	յատուկ	յար
յարաբերություն	յարգ	յարդ	յարդարել
յարել	յարկ	յարձակուել	յարմար
յարութիւն	յաւակնել	յաւելեալ	յաւէտ
յաւերժ	յաւիտեան	յաւիշտակել	յափրանալ
յելուզակ	յեղա(փոխել)	յեղյեղուկ	յեճուել
յետա(ձգել)	յետիճ	յետոյ	յերիւրել
յիմար	յիշատակ	յիշել	յիշոց
յիսուն	յղի	յղկել	յղփանալ
յոբելեան	յոզնակի	յոզնել	յոխորտալ
յողդողդ	յոյզ	յոյժ	յոյլ
յոյն	յոյս	յոյր	յոպոպ
յոռի	յովագ	յորդ	յորդորել
յորձանք	յորջորջել	յուզել	յուլիս
յուղարկաւոր	յունիս	յունուար	յուշ
յուրթի	յստակ	յօդ	յօդել
յօդուած	յօժար	յօնք	յօշ(ոտ)ել
յօտել	յօրանալ	յօրանջել	յօրինել:

Ուղղագրական այս երկար ցանկը միանգամից սովորելը չափահաս մարդու համար դժուար կարող է լինել, բայց աշակերտի համար, որ տարիների ընթացքում շատ անգամ հանդիպում

Է նոյն բառերին եւ մաս-մաս սովորում, չկայ մասնատր դժուարութիւն:

Անշուշտ, յ-ով սկստող բառերը ածանցուելիս եւ բարդուելիս պահպանում են այդ յ-ն թէ՛ բառասկզբում եւ թէ՛ բառամիջում: Այստեղ բերենք մի քանի օրինակ՝

- Յագեճալ՝* յագ, յագեցնել, յագուրդ, անյագ.  
*Յաղթ՝* յաղթել, յաղթանակ, յաղթահասակ, քաջա-  
յաղթ.  
*Յայտ՝* յայտնի, յայտարարել, յայտնութիւն, ան-  
յայտ.  
*Յանգ՝* յանգել, յանգաւոր, նոյնայանգ.  
*Յանձնել՝* յանձն առնել, յանձնարարել, յանձնաժո-  
ղով.  
*Յատուկ՝* յատկութիւն, յատկացնել, յատկապէս,  
յատկանիշ.  
*Յարգ՝* յարգի, յարգանք, յարգել, մեծայարգ.  
*Յարկ՝* բազմայարկ, վերնայարկ.  
*Յորդ՝* յորդել, յորդարուիս, կենսայորդ.  
*Յօդ՝* յօդել, յօդուած, յօդացաւ, ստայօդ:

### Վարժութիւն

Հետեւեալ բառերի մէջ նշանակուած գծիկների տեղ դնել ճ կամ յ՝ կանոնի համաձայն:

...գօր, ...լու, ...ղանալ, ...ղկել, ...մայել, ...մուտ, ...նազան-  
դել, ...նոց, ...նչել, ...պարտ, ...պատակ, ...պել, ...ստակ, ...սկել,  
...րապարակ, ...ոչակ, ...րճուանք, ...րաժաւորել, ...սկայ,  
...ղփանալ, ...րաշալի:

Յատուկ անուններ՝ ...ակոր, ...ովսեփ, ...ովհաննես, ...մա-  
յեակ, ...րանտ, ...րաչեայ, ...ասմիկ, ...ոփսփմէ:



## Ո եւ Օ

Ինչպէս ծանօթ է, Մեսրոպեան այբուբենում օ չկար: Հին գրաբարում բաղաձայնից առաջ գրուած աւ-ը, ժամանակի ընթացքում հնչիւնափոխուելով, ստացել էր օ կամ բառամիջի ո հնչիւնը: Ուստի ո-ից զանազանելու համար, XI-XII դարերից սկսած, աւ-ի տեղ գրուել է օ: Ըիշտ Առյուծաբանի հնչիւնափոխութիւն է կրել լատիներէն **au** երկբարբառը ֆրանսերէնում:

Հետեւաբար ներկայիս դասական ուղղագրութեամբ գրում ենք օ միայն այնտեղ, ուր գրաբարը ունէր աւ, կամ լատիներէնը՝ **au** (օտար բառերի եւ անունների համար):

### 1. Բառասկզբում դասական ուղղագրութեամբ՝

ա) օ լսուելիս գրում է օ. ինչպէս՝ *օգուտ, օր, օծիտ, օծել, օձ, օտար, օր, օրէնք* եւ այլն:

Միայն վ տառից առաջ գրում է ո՝ *ով, ովասիս, ովկիսանոս; ովսաննա:*

Ածանցման եւ բարդութեան ժամանակ բառասկզբի օ-ն բնականաբար մնում է անփոփոխ նաեւ բառամիջում՝ *ազգ-օգուտ, ամենօրեայ, անօրէն* եւ այլն:

բ) Բառասկզբում վո լսուելիս գրում է ո. ինչպէս՝ *ոգի, ոզնի, ոլոռ, ողկոյզ, ոչխար, որդի, որթատունկ, որում, որս* եւ այլն:

Բացառութիւն է *վոհմակ* բառը, որը, սակայն, կարելի է գրել նաեւ՝ *ոհմակ:*

### 2. Բառավերջում օ չի գրում, այլ՝ ոյ. *երեկոյ, մեծարգոյ, անհաճոյ* եւ այլն:

Միայն *այո, քո* բառերը չունեն յ, ինչպէս վերը ասացինք:

Ոմանք յատուկ անունները գրում են օ-ով. ինչպէս՝ *Կարօ, Մարօ, Սազօ* եւ այլն, բայց հայերէն լեզուի կանոնի համաձայն՝ պէտք է գրել ո-ով: Եւ ինչպէս -ա-ով վերջացող անուններին չենք ատելացնում յ (Անգլիա, Իտալիա), նոյն սկզբունքով պէտք է գրել՝ *Կարո, Մարո, Դրո*: Բայց սեռական հոլովում լինում են՝ *Կարոյի, Մարոյի, Դրոյի* եւ այլն:

3. Բառամիջում գրում է օ միայն այն բառերի մէջ, ուր հին գրաբարը ունէր աւ, եւ դա կարող է լինել միայն բաղաձայնից առաջ. այսպէս՝ *գօտի, դրօշ, կօշիկ* (գրաբար՝ *գաւտի, դրաւշ, կաւշիկ*):

Բայց արմատական երկու բաղաձայնից առաջ օ չի գրում: Անշուշտ, *աղօթք, զօրք, յօնք* եւ այլն բառերի ք-ն արմատական չէ, ինչպէս նաեւ *զքօսնել* բառում՝ ն (*զքօսանք*):

Բացառութիւն են՝ *անօսք, արտօսք, նօթճել*:

Բառամիջում շատ ատելի է օգտագործում ո՛ր *թողոք, գոռոգ, դրող, զոհ, թողակ, ժողով, լոգանք, կողով* եւ այլն:

Յիշենք նաեւ ո-ով գրուող ածանցներ՝

-անց՝ *հաւանաց, հիւանդանոց.*

-ող՝ *գրող, խօսող.*

-ոնք՝ *մերոնք, ձերոնք.*

-ովի՝ *ընկերովի, վճարովի.*

-ոտ՝ *կեղտոտ, կրքոտ.*

-որ՝ *կտոր, հատոր.*

-որդ՝ *յաճախորդ, որսորդ:*

Այժմ մնում է իմանալ, թէ գրաբարում ո՛ր բառերը բաղաձայնից առաջ ունէին աւ, որ յետոյ դարձել է օ: Դրա համար այստեղ բերում ենք օ-ով գրուող բառերի ցուցակը.

*Ակօս                    աղօթք                    աղօտ                    աղօրիք*

ամօթ <sup>11</sup>	անօթ	անօթի	անօսր
ապարօշ	առաւօտ	արտօսր	արօտ
արօր	բարօր(ութիւն)	բռնագրօս	բօթ
գործօն	գօս	գօտի	դրօշ
եօթը	գքօսնել	գգօն	գօդ
գօրք	թօթափել	թօն	թօթունել
թօշնել	լօդիկ	խօթ	խօլ
խօսք	ծանօթ	ծղօտ	ծնօտ
կարօտ	կտրօն	կրօն	կօշիկ
համառօտ	հետագօտել	հզօր	հօտ <sup>12</sup>
ձօն	դօդել	դօդանջել	ճօճել
մօտ	մօրուք	յօդ	յօժար
յօնք	յօշոտել	յօրանջել	յօրիճել
նարօտ	նօթի	նօսր	նօթնել
շօթ	շօշափել	պաշտօն	սօս
սօսափիւն	սօսի	վառօդ	տօթ
տօն	տօսախ	ցօդ	ցօդուն

11 Աղօթք, ամօթ, արօտ, ծանօթ, մօտ (գրաբարում՝ աղաւթք, ամաւթ, արաւտ, ծանաւթ, մաւտ) բառերից կազմունել են՝ աղաչել, ամաչել, արածել, ճանաչել (ծանաչել), մատչել բալերը:

Թօթափել (գրաբարում՝ թաւթափել)՝ առաջացել է թափթափել բառից, որ պարզապէս կրկնութիւնն է թափ արմատի:

Նոյն արմատից է նաեւ՝ թօթունել, այսինքն՝ թափթափել, թաւթաւել, թօթ(ա)ւել, թօթունել:

Նոյն կազմութիւնը ունեն՝ շօշափել եւ սօսափիւն, այսինքն՝ շաւշափել-շափշափել, տաւսափիւն-սափսափիւն եւ այլն:

Այս ստուգաբանութիւնները ցոյց են տալիս, որ ուղղագրութիւնը կարելոր դեր ունի լեզուի կազմութեան, նրա արմատների եւ իմաստների հասկացողութեան համար: Դարձեալ՝ եթէ գիտենք բառի կազմութիւնը, արդէն գիտենք նաեւ ուղղագրութիւնը:

12 Հօտ նշանակում է ոչխարների խումբ, իսկ հոտ՝ բոյր:

Նշենք նորից, որ եթէ բառարմատը օ ունի, անշուշտ նույնը պահպանում է նաեւ նրանից կազմուած ածանցաւոր եւ բարդ բառերի մէջ: Յիշենք մի քանի օրինակ.

*Ամօթ՝ ամօթխած, անամօթ.*

*Զօր(ք)՝ զօրաւոր, զօրագունդ, համազօր, անզօր.*

*Խօսք՝ անխօս, շատախօս, ստախօս.*

*Ծանօթ՝ ծանօթութիւն, անծանօթ:*

Այստեղ դնում ենք նաեւ մի քանի ածանցներ, որ օ ունեն.

*-առօտ՝ կարճառօտ, համառօտ.*

*-օրէն (օրէնք բառից)՝ արդարօրէն, հաւանօրէն.*

*-եօք (գրաբ. յոգն. գործ. հոլ.)՝ արդեօք, ընտանեօք.*

*-օք (գրաբ. յոգն. գործ. հոլ.)՝ առօք-փառօք, իրօք, խելօք, նախօրօք, ցաւօք սրտի.*

*-օն՝ աղօն, գողօն, գործօն, թափօն, թերթօն, թողօն, ծամօն<sup>13</sup>, կտրօն.*

*-օնք՝ զարթօնք:*

*Հայր, մայր, եղբայր սեռական հոլովում լինում են՝ հօր, մօր, եղբօր:*

13 Զարմանալի է, որ բառարանների մէջ *ծամօնք* գրում է ո-ով՝ *ծամոն*, որի համար, սակայն, որեւէ պատճառ չկայ, որովհետեւ այստեղ էլ միեւնոյն ածանցն է, ինչպէս ունեն միւսները:

## ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետևեալ բառերը, որ ընդհանրապէս գրում են օ-ով, հարկ է սրբագրել եւ գրել ո-ով.

*Արտունել՝* կապ չունի *տօն* բառի հետ. բարդութիւն է գրաբար *արտ(աքս)* եւ *ունել* բառերից. իրականում պէտք է լինէր՝ *արտունել*:

*Թաքոր՝* ո՛չ *թափօր* եւ ո՛չ էլ *թափոր*. սա պարզապէս Սուրբ Գրքի Թաքոր լեռան անունն է, ուր կատարում էին նման կրօնական արարողութիւններ:

*Նոտար՝* լատիներէն *notar* բառն է. լատին-յուն, եւրոպական օ-ն հայերէնում ո է:

*Նոտր(գիր)՝* *նոտար* բառից է:

*Քող՝* ո՛չ *քօղ*, թէեւ դա էլ շատ է օգտագործուած:

Ոմանք օ-ով են գրում նաեւ հետևեալ բառերը, ինչը յայտնապէս սխալ է, ուստի սրբագրում ենք՝ *գիւղորայք*, *դեղորայք*, *դրոշմել*, *խոստանալ*:

## ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԵՒ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ

Հայերեն լեզուի ուղղագրության կանոնները յստակ ներկայացնելուց լետոյ ամենեւին հարկ չկար այստեղ օտար բառերի եւ անունների համար առանձին գլուխ յատկացնել: Բայց մեզ համար բոլորովին անհասկանալի է չափազանցուած մտահոգութիւնը՝ օտար բառերը եւ անունները անպայման այնպէս գրելու, որ համապատասխանեն օտար լեզուի ճշգրիտ եւ կատարեալ արտասանութեանը՝ ի հարկին նոյնիսկ զոհելով մեր լեզուն, խառնակելով ուղղագրութիւնը: Կարծես թէ Մեսրոպ Մաշտոցը ոչ թէ հայերենի, այլ օտար լեզուների համար ստեղծած լիներ հայերեն տառերը:

Տարբեր հարց է, թէ ինչու ընդհանրապէս գործածել օտար բառեր, երբ նրանց համարժէք շատ յարմար եւ մաքուր հայերէնը ունենք:

Յայտնի իրողութիւն է, որ ոչ մի լեզու չի կարող իր տառերով ճշգրիտ ներկայացնել բոլոր լեզուների հնչիւնները: Եւրոպական մեծ ազգերը այդ հարցում ամենեւին խնդիր չունեն: Գերմանացին առնում է անգլերէն կամ ֆրանսերէն անունները եւ գրում է այնպէս, ինչպէս գրում են նոյն ազգերը, թէև գերմաներէնում դրանք բոլորովին այլ կերպ կը կարդացուեն: Այնպէս որ գերմանացի ընթերցողը պետք է անպայման լսած լինի նոյն անունները, որպէսզի կարողանայ ուղիղ կարդալ: Բայց դա նրանց համար ամենեւին հարց չի յարուցում:

Հայերէնը, ուրիշ լեզուների հետ համեմատուած, շատ անելի դիւրութիւն ունի օտար հնչիւնները արտայայտելու, ուստի մեր չափազանցուած մտահոգութիւնը անտեղի է:

Նախ ասենք, որ հին գրաբարից մեզ հասած օտար բառերի եւ անունների համար տառադարձութեան հարց չկայ. դրանք պէտք է պահպանել նոյնութեամբ:

Իսկ նորագոյն շրջանի օտար բառերի եւ անունների տառադարձութեան համար ունենք երկու սկզբունք՝

ա) որչափ կարելի է, ճիշտ արտայայտել օտար լեզուի արտասանութիւնը.

բ) որչափ կարելի է, պահպանել հայերէն լեզուի կանոնները: Սկսենք մեր բացատրած կանոնների կարգով:

### **Վ, Ի, ՈՒ**

Հայերէն լեզուի օրէնքների համաձայն՝ գրում ենք.

Վ բառասկզբում՝ *Վառնա, Վերոնա.*

Վ ու-ից յետոյ՝ *Հանովեր, Նովգորոդ.*

Ի բառամիջում (երկու ձայնատրի միջեւ)՝ *Մոլդաւիա.*

Ի բառավերջում (ձայնատրից յետոյ)՝ *արխի.*

ՈՒ բաղաձայնից յետոյ եւ ձայնատրից առաջ՝ *Էդուարդ:*

Բայց այս կանոններից կարելի է նաեւ շեղուել օտար հնչիւններին աւելի յարմարեցնելու համար. տանք օրինակներ՝

*Լվով,* փոխանակ՝ *Լուով.*

*Ուիլսըն,* փոխանակ՝ *Վիլսոն.*

*Վոլգա,* թէեւ ու-ից առաջ հայերէնում Վ հարկատր չէ.

*Տիվրիկ,* ինչպէս ասացինք, իւր բաղաձայնից առաջ երկբարբառ է. *Տիւրիկ*՝ նոյն հնչումը չի տալիս:

### **Ե եւ Է**

Ինչպէս ասել ենք արդէն, է պէտք է գործածել՝

Բառասկզբում (եթէ հնչում ենք է)՝ *Էմիլ, Էտնա.*

Բառավերջում՝ *Մոնթե*.

Բառամիջում (ձայնաւորից առաջ)՝ *Բէատրիս, Լեոպոլդ Նասպոլէոն, Էլէոնորա, լեգէոն*:

Բացի նշուած կէտերից, օտար բառերում եւ անուններում, նաեւ վերջին վանկում, միշտ պէտք է գրել ե, առանց երբեք կանոններից շեղուելու. այսպէս՝ *գեներալ, լեգատ, Պետերբուրգ, Վերեր, Տրեդերիկ* եւ այլն:

Նոյնը հայերէն անունների համար՝ *Թերլեմեզեան, Գիլլեւերեան* եւ այլն:

Ուստի սխալ է գրել՝ *զէնիթ, գէներալ, Բերլին, Վալտեր, Պէտերման* եւ այլն:

**Դիտողութիւն.** Հայաստանեան ուղղագրութեամբ գրուած *սուբյէկտ, օբյէկտ* բառերը (թէեւ հայերէնում ամենեւին հարկ չկայ դրանք գործածել, որովհետեւ ունենք դրանց համարժէք *ենթակայ* եւ *առարկայ* բառերը) պէտք է գրել՝ *սուբիէկտ, օբիէկտ*:

## Ոյ

Բաղաձայնից առաջ ոյ երկբարբառը հայերէն բառերում, ինչպէս ասել ենք, հնչում է ույ՝ *թոյն, կոյտ* եւ այլն:

Բայց դա ամենեւին արգելք չէ, որ օտար բառերում եւ անուններում նոյն երկբարբառը գործածենք նաեւ օյ հնչիւնի համար. ինչպէս՝ *թոյկոտ, Դիտրոյտ* եւ այլն: Ընթերցողը պէտք է իմանայ, որ դա օտար բառ կամ անուն է, եւ հարկ չկայ, որ խստօրէն ենթարկուի հայերէնի կանոններին:

Դարձեալ՝ դէմ չենք, որ օտար անուններում, եթէ գրողը յարմար գտնի, գրի նաեւ՝ ույ. դա չի աղաւաղում հայերէն լեզուն:



## Ո եւ Օ

Բառասկզբում գրում ենք **օ**, եթէ հնչւում է **օ**. ինչպէս՝ *Օղէսա, Օղեր*:

Բայց եթէ հնչւում է **վո**, պէտք է գրել **վո** (ոչ թէ ո՛ հայերէնի նման)՝ *Վոյզա, Վոյտեր*:

Բառամիջում գրում ենք **օ** միայն այն հին անուններում, ուր լատիներէնը ունէր **au**. ինչպէս՝ *Պօղոս (Paulus)*:

Այլապէս միշտ պէտք է գրել ո՛՝ *Բերթվեն, Լոնդոն, Դոկտոր, մէթոդ*:

Բոլորովին սխալ է գրել՝ *Պօլիս, Լիզբօն, Լօնտօն, Սօֆիա, Ռօբերտ* եւ այլն, որովհետեւ դրանց ձայնատորը պարզ **օ** է, ո՛չ **au**: Պէտք է գրել՝ *Պօլիս, Լիզբոն, Լոնդոն, Սոֆիա, Ռոբերտ*:

Բառավերջում, ինչպէս հայերէն անունների համար վերը ասացինք, նոյնպէս օտար անուններում պէտք է գրել միշտ ո՛՝ *Վիկտոր Հիզո, Սան Մարիան*. իսկ սեռական հոլովը լինում է՝ *Հիզոյի, Սան Մարիանյի*:

Եթէ օտար բառերը (ո՛չ անունները), որպէս արդէն հայացած բառ, գործածում ենք, հարկ է հայերէնի կանոնների համաձայն գրել՝ *բիրոյ, դեպոյ* եւ այլն:

## Օտար հնչիւններ՝ **ey, ö, ü**

(**ey**) Արեւելահայերէնում արեղեանական ուղղագրութիւնից առաջ եւ արեւմտահայերէնում միշտ օտար **ey** հնչիւնի համար օգտագործուել է էյ երկբարբառը, որն այժմ հայաստանեան ուղղագրութեամբ գրում է՝ էյ:

Ոմանք ծաղրանքով են արտայայտում էյ գրողների մասին՝ նրանց տգէտ համարելով, եւ առարկում են, որ է-ն արդէն **V դար**ում հաւասար էր էյ-ի. ուստի չի կարելի է-ի վրայ յ աւելացնել:

Ծիշտ է, որ է հնչիւնը (ո՛չ տառը) առաջացել է **նախա-մետրոպէան անգիր շրջանի ey** հնչիւնից. այդ մասին լեզուա-բաննէրը համաձայն են: Բայց թէ ինչպէս էր այդ է-ն հնչւում V դարում՝ գրերի գիտի ժամանակ, տարբերում են կարծիքները. ոմանք ասում են **ey**, իսկ ուրիշները՝ փակ **e**:

Մենք համաձայն ենք վերջին կարծիքին, եւ այս է մեր պատճառաբանութիւնը. եթէ V դարում է-ն ունենար **ey** հնչիւնը, հարկ չկար դրա համար յատուկ տառ ստեղծել. Մետրոպ Մաշտոցը կը գրէր պարզապէս՝ **եյ**, ինչպէս գրել է **-այ** եւ **-ոյ**, որոնք կարդացւում էին՝ **ay** եւ **oy**:

Ուստի պէտք է ընդունել, որ **նախամետրոպէան անգիր շրջանի ey** հնչիւնը V դարում կորցրել էր արդէն իր կիսաձայն **ի-ն (y)** եւ դարձել էր **ē**, այսինքն՝ փակ եւ երկար **e**, որի համար Մետրոպ Մաշտոցը ստեղծել է է տառը հակադրելու համար **ե-ին**, որ անելի բաց էր եւ կարճ: Յետոյ արդէն VII դարում, ինչպէս ասացինք, է եւ է ձայնատրների հնչիւնը նոյնացել է:

Բայց, անկախ ստուգաբանական այդ տուեալներից, կամ եթէ նոյնիսկ ընդունենք վերոյիշեալ առաջին կարծիքը, դա ոչինչ չի նշանակում: Իրողութիւնը այն է, որ արեւեանական-հայաստանեան ուղղագրութիւնից դուրս օտար **ey** հնչիւնի համար միշտ յարմար է նկատուել եւ օգտագործուել էյ-ը: Մինչ էյ-ը բոլորովին խորթ է դասական ուղղագրութեան:

Ուստի գրւում է՝ *Ջէյթուն, Բէյրութ, շէյխ, Ջէյմս* եւ այլն:

(Ö) Գերմաներէն **ö** կամ ֆրանսերէն **eu** հնչիւնի համար արեւմտահայերէնում միշտ օգտագործուել է **էօ**, իսկ արեւելահայերէնում (1922 թուականից առաջ)՝ **եօ** կամ **էօ**:

Բայց դասական ուղղագրութեամբ **եօ** գրւում ենք նաեւ հայերէն բառերում՝ *արդէօք, ընտանեօք* եւ այլն, ուր **եօ-ն** այդ օտար հնչիւնը չի տալիս:

Չի կարելի գրել նաեւ էո, որովհետեւ դա կը լինի պարզապէս երկու ձայնաւոր՝ է եւ ո. ինչպէս՝ *Թէոդորոս*:

Հետեւաբար միակ յարմարն է էօ-ն, որ չունի ոչ մի անպատեհութիւն. այսպէս՝ *Գէօթէ, Էօժեն, Քէօսէեան* եւ այլն:

(Ս) Արեւելահայերէնում արեղեանական ուղղագրութիւնից առաջ եւ արեւմտահայերէնում գերմաներէնն ու կամ ֆրանսերէնն ու հնչիւնի համար միշտ օգտագործուել է իւ. ինչպէս՝ *Հիւքշման, Հիւզո, Օգիւստ* եւ այլն. եւ դա է ուղիղ ձեւը:

Հայաստանեան ուղղագրութեամբ յու-ն (*Հյուզո*) չի տալիս օտար ու հնչիւնը:

Իսկ երբ ի-ից յետոյ հարկ է վ հնչուի, կը գրենք վ, ինչպէս տեսանք վերը՝ *Տիվրիկ* եւ այլն:

**ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԵՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ  
ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻԻՆ**

Հայերենում ունենք մասնաձայն երբեակ հնչյուններ՝

Բ	Պ	Փ
Գ	Կ	Բ
Դ	Տ	Թ
Ձ	Ծ	Ց
Ջ	Շ	Չ

Արեւելահայերենում, ուր պահպանուել է հին գրաբարի արտասանութիւնը, առաջին սիւնակը ձայնեղ է (լատինատաւ՝ b, g, d), երկրորդը՝ խուլ (լատինատաւ՝ p, k, t) եւ երրորդը՝ շնչեղ խուլ:

Արեւմտահայերենում առաջին եւ երկրորդ սիւնակների հնչիւնը շրջուել է, այսինքն՝ առաջինը դարձել է խուլ (լատինատաւ՝ p, k, t), երկրորդը՝ ձայնեղ (լատինատաւ՝ b, g, d):

Հակառակ արտասանութեան այդ տարբերութեանը, ունենք, սակայն, միասնական դասական ուղղագրութիւն արեւելահայերենում եւ արեւմտահայերենում:

Օրինակ՝ թե՛ արեւելահայը, թե՛ արեւմտահայը գրում են՝ *Բաղը պատի վրայ է*: Բայց եթէ իրար հետ խօսեն, եւ մէկը միսին սաի այդ խօսքը, դիմացինի արտասանութեամբ դա կը լինի՝ *Պատը բաղի վրայ է*: Նոյնը կը պատահի՝ *Չազը ծակն ընկաւ* խօսքի դէպքում, այսինքն՝ երկուսն էլ կը գրեն նոյնը, բայց խօսելու ժամանակ դիմացինի համար դա կը լինի՝ *Շակը ձագն ընկաւ*:

Այդ ձայնափոխութիւնը արեւմտահայերենում սկսուել է դեռեւս X-XI դարերից Արեւմտեան Հայաստանում եւ Կիլիկիայում:

Ուղղագրութիւնը կարելի է փոխել (դժբախտաբար, նաեւ խեղաթիւրել), բայց ո՛չ արտասանութիւնը: Ուստի չի կարելի արեւմտահայերից պահանջել, որ փոխեն իրենց արտասանութիւնը: Սակայն անհրաժեշտ է, որ արեւելահայ եւ արեւմտահայ երկու զանգուածները ունենան միեւնոյն ուղղագրութիւնը, եւ դա՛ յանուն լեզուի մաքրութեան եւ կանոնատր զարգացման, որը միայն դասական ուղղագրութիւնը կարող է տալ:

Զմոռանանք դարձեալ, որ հայերէն լեզուի իրական զարգացման համար անհրաժեշտ է նաեւ գրաբարը, որ անպայման պէտք է դասաւանդուի ոչ միայն համալսարանների հայագիտական բաժիններում, այլ նաեւ դպրոցների բարձր դասարաններում:

Գիտենք, որ գրաբարի համար դասական ուղղագրութիւնը պարտադիր է: Ուստի եթէ մեր դպրոցներում հայերէն լեզուի համար երկու ուղղագրութիւն ուսուցանենք, աշխարհաբարի համար՝ հայաստանեանը եւ գրաբարի համար՝ դասականը, դա կը լինի արդէն կատարեալ անմտութիւն եւ խառնակութեան ու անգրագիտութեան սկզբնապատճառ:

Մեզ համար այնքան բնական եւ այնքան պարզ է, որ ասելն իսկ անելորդ է, որ հայերէն լեզուի համար պէտք է մեկ ուղղագրութիւն թե՛ գրաբարի, թե՛ արեւելահայերէնի եւ թե՛ արեւմտահայերէնի համար: Իսկ դա կարող է լինել միայն դասական ուղղագրութիւնը:

## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՂԵՑՈՅՑ ԴԱՍԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ .....	1
ԵՐԿՈՒ ԽՕՍՔ.....	3
ԴԱՍԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ .....	5
ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԵՒ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱԴԱՐ- ՁՈՒԹԻՒՆ.....	38
ԱՐԵԻԵԼԱՀԱՅ ԵՒ ԱՐԵԻՄՏԱՀԱՅ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ.....	44